Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-583-05.05.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասում «ժգ)» կետից հետո լրացնել նոր «ժգ.1)» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժգ.1) սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների չափորոշիչները.»:

Հոդված 2. Օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «գ.» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման գները՝ ըստ չափորոշիչների, հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների աճուրդային մեկնարկային գները՝ ըստ չափորոշիչների, ինչպես նաև հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների էլեկտրոնային աճուրդի կանոնակարգը,»,

2) լրացնել նոր «գ.1)» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ.1) կազմակերպում և անցկացնում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդ,»:

Հոդված 3. Օրենքի 13.2-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Տրանսպորտային միջոցը փոխելիս (օտարելիս) հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողն այն ի պահ է հանձնում տրանսպորտային միջոցը հաշվառող մարմնին: Եթե վեց ամսվա ընթացքում տվյալ հաշվառման համարանիշներն օգտագործողը կամ նրա մերձավոր ազգականը (հայր, մայր, եղբայր, քույր, ամուսին, զավակ) հաշվառման է ներկայացնում սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ տրանսպորտային միջոց, ապա այդ հաշվառման համարանիշները տրամադրվում են օգտագործողին կամ մերձավոր ազգականին՝ հաշվառման համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ: Նշված ժամկետում այլ տրանսպորտային միջոց հաշվառման չներկայացնելու դեպքում նա զրկվում է ի պահ հանձնված հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործելու առաջնահերթության իրավունքից: Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողը կարող է ցանկացած պահի հրաժարվել այդ հաշվառման համարանիշի օգտագործման իրավունքից: Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել տրանսպորտային միջոցը ժառանգած անձին՝ հաշվառման համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ:

7. Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը սույն հոդվածի 6-րդ մասում նշված մերձավոր ազգականին կարող է փոխանցել միայն տվյալ հաշվառման համարանիշն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձը, բացառությամբ ժառանգությամբ կամ տվյալ հաշվառման համարանիշներն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձանց փոխանցելու դեպքերի:»:

Հոդված 4. Օրենքի 13.2-րդ հոդվածից հետո լրացնել նոր 13.3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 13.3. Տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդների անցկացման հիմնական պայմանները

1. Տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդը (այսուհետ՝ աճուրդ) էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ներքին գործերի լիազոր մարմնի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը

կազմակերպում և անցկացնում է ներքին գործերի լիազոր մարմնի համապատասխան ծառայությունը:

2. Աճուրդի լոտ է հանդիսանում տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը:

3. Աճուրդի անցկացման գործընթացի նկատմամբ կիրառվում են «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով սահմանված՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին (աճուրդին) վերաբերող կարգավորումները, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով:

4. Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը կատարվում է աճուրդն անցկացնելու (սկսելու) օրվանից առնվազն երկու օր առաջ, որը ներառում է «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-8-րդ կետերով սահմանված տեղեկությունները:

5. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է ներքին գործերի լիազոր մարմնի *http://www.mia.gov.am* պաշտոնական ինտերնետային կայքում:

6. Աճուրդին մասնակցել ցանկացող անձը ինտերնետ կայքում ստեղծված համակարգում գրանցում է մասնակցի անձնական էջ, որից հետո հրապարակային ծանուցման մեջ նշված կարգով և ժամկետներում լոտի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով աճուրդի մասնակցության նախավճար է սառեցնում կամ փոխանցում կազմակերպչի դեպոզիտ հաշվին և հայտագրվում աճուրդին: Աճուրդի հրապարակային ծանուցման և մասնակիցների գրանցման կարգը սահմանում է ներքին գործերի լիազոր մարմնի ղեկավարը:

7. Յուրաքանչյուր լոտի աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում տվյալ լոտի աճուրդն սկսելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Աճուրդի ավարտին նախորդող 10 րոպեների ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 10 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից:

8. Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Լոտի մեկնարկային գնի նվազագույն հավելումները կատարվում են «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափերով:

9. Աճուրդում հաղթած մասնակցի կողմից նախօրոք սառեցված նախավճարը փոխանցվում է կազմակերպչի հաշվին, իսկ դեպոզիտ հաշվին փոխանցված գումարը չի վերադարձվում:

10. Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարն ապասառեցվում է (վերադարձվում է):

11. Լոտի գնի վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով:

12. Կազմակերպիչն աճուրդի ավարտից հետո անմիջապես աճուրդում հաղթած մասնակցի անձնական էջում հասանելի է դարձնում կամ նրա կողմից նշված էլեկտրոնային փոստին է ուղարկում աճուրդի արձանագրությունը, որի ձևը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

13. Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել գնված լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը:

14. Աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնման գինը չմուծվելու դեպքում նախավճարը չի վերադարձվում:

15. Լոտի վաճառքի ամբողջական գինը կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի անձնական էջում հասանելի է դարձնում կամ նրա կողմից նշված էլեկտրոնային փոստին է ուղարկում հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին վկայականը, որի ձևը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

16. Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին վկայականը վավեր է մեկ տարի: Նշված ժամկետում այն տրանսպորտային միջոցի հաշվառում իրականացնող ստորաբաժանում չներկայացնելու (աճուրդով օգտագործման իրավունքով ձեռք բերված հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշներով տրանսպորտային միջոց չհաշվառելու) դեպքում աճուրդում հաղթող մասնակիցը կորցնում է հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը, իսկ լոտի վաճառքի գինը չի վերադարձվում:

17. Աճուրդը համարվում է չկայացած, եթե՝

1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ.

2) աճուրդի ընթացքում լոտի մեկնարկային գնի հավելում չի կատարվել.

3) աճուրդում հաղթած անձը հրաժարվել է առուվաճառքի պայմանագիր կնքելուց կամ սահմանված ժամկետում չի վճարել լոտի գնման գինը:

18. Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չմուծելու հիմքով, ապա տվյալ մասնակցի համար հաջորդ աճուրդի մասնակցության նախավճարը սահմանվում է լոտի մեկնարկային գնի քսան տոկոսի չափով:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով և 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամաններն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Գործող իրավակարգավորումներով նախատեսված է հաշվառման համարանիշների 3 տեսակ՝
ա) հերթական,
բ) ցանկալի,
գ) մեծ պահանջարկ ունեցող:
Այդ համարանիշերը հատկացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման դիմաց, իսկ վերջին երկուսի դեպքում՝ ըստ հաշվառող անձի նախընտրության և կապված կոնկրետ համարանիշի չափորոշիչից, դրա օգտագործելու առաջնահերթության իրավունքը ձեռք բերելու համար նաև ՀՀ կառավարության 2020 թվականի թիվ 1496-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված գումարի վճարման դիմաց (ըստ որի, դրանց համար ենթակա է վճարման սկսած 36.000 ՀՀ դրամից մինչև 8.000.000 ՀՀ դրամ գումար):
Մեծ պահանջարկ ունեցող համարնիշերի չափորոշիչները սահմանված են ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 816-Ն որոշմամբ, որով թույլատրվում է լատինական այբուբենի ցանկացած տառով ձեռք բերել նույն որոշմամբ հաստատված 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված չափորոշիչներին համապատասխանող ցանկացած համարանիշ:
Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնալով նվազում է մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշեր ձեռք բերելու պահանջարկը, իսկ քաղաքացիներից ստացված դիմումների և մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ քաղաքացիների համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում առավել գեղեցիկ և բարձր արժեք ունեցող համարանիշերը:
Միաժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությամբ կարելի է նշել, որ աշխարհի մի շարք երկրներում՝ Հնդկաստանում, Չինաստանում, Անգլիայում (որտեղ բոլոր համարանիշերն են ենթակա աճուրդով ձեռք բերման՝ սկսած 250 ֆունտ սթերլինգից, որտեղ 80 ֆունտ սթերլինգը համարանիշի տպագրման և գրանցման արժեքն է), Տաջիկստանում, Կիրգիզիայում (այդ թվում՝ էլեկտրոնային աճուրդով՝ https://raqam.tj/#/dashboard, https://nomer.srs.kg/home.xhtml) և այլն, համարանիշերի առանձին տեսակների (սուպեր համարներ, ցանկալի համարներ, գեղեցիկ համարներ և այլն) ձեռք բերման համար նախատեսված է աճուրդային կարգ:
ՌԴ-ում 2010 թվականի «Ռուսաստանի Դաշնությունում տրանսպորտային միջոցների հաշվառման մասին» օրենքով նախատեսված է առանձին համարանիշերի աճուրդային կարգով ձեռք բերելու մասին կարգավորում, իսկ 2021 թվականից ՌԴ-ում շրջանառության մեջ է դրվել աճուրդային եղանակով առանձին համարանիշերի ձեռք բերման մասին իրավական ակտերի փաթեթը (regulation.gov.ru):
Ցանկալի և մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի ձեռք բերման մասով Եվրոպական երկրների հիմնական մասում (Դանիա, Գերմանիա, Լեհաստան և այլն) գործում է ՀՀ ներկայիս կարգավորման համանմանությամբ ընթացակարգ (առանց աճուրդի):

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է նախատեսել նոր տեսակի՝ հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշներ: Վերջիններս, պահպանելով օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված՝ տառեր և թվեր պարունակելու պահանջը, մեծ պահանջարկ ունեցող համարանիշներից տարբերվելու են տառերի ու թվերի համադրությամբ (օրինակ՝ ՕՕ++ՕՕՕ և դրա տարբեր կոմբինացիաները): Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման առաջնահերթության իրավունքը ստանալու համար կիրականացվի էլեկտրոնային աճուրդ:

4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է պետական բյուջեում եկամուտների էական ավելացում, սակայն այս փուլում հնարավոր չէ կանխատեսել այդ չափը, քանի որ նախագծի ընդունումից հետո պետք է ՀՀ կառավարության նոր որոշմամբ սահմանվեն տրանսպորտային միջոցների հաշվառման առանձահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների չափորոշիչները, ինչպես նաև դրանց հատկացման աճուրդների անցկացման կարգը, իսկ ՀՀ ՆԳ նախարարի հրամանով՝ նաև տրանսպորտային միջոցների հաշվառման առանձահատուկ պահանջարկ ունեցող համարանիշերի աճուրդային մեկնարկային գները:
Նշված իրավական ակտերի նախագծերի մշակման փուլում միայն հնարավոր կլինի կանխատեսել այն առավելագույն եկամուտը, որը կստացվի հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշները աճուրդի նվազագույն արժեքով իրացման դեպքում՝ կախված առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշի աճուրդի մեկնարկային գնի չափից և այդ համարանիշների չափորոշիչների արդյունքում ստացված քանակության հանրագումարից:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է նախատեսել իրավական հնարավորություն՝ հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշեր սահմանելու և դրանք էլեկտրոնային աճուրդային կարգով օտարելու նպատակով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասում «ժգ)» կետից հետո լրացնել նոր «ժգ.1)» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժգ.1) սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների չափորոշիչները~~, **ինչպես նաև դրանց հատկացման աճուրդների անցկացման կարգը.»:**~~

Հոդված 2. Օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին մասում՝

1. «գ.» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«գ. սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների աճուրդային մեկնարկային գները և հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման գները՝ ըստ չափորոշիչների,»,~~

~~2. լրացնել հետևյալ բովանդակությամբ «թ)» կետով.~~

~~«թ) կազմակերպում և անցկացնում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման աճուրդները:»:~~

«գ. սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման գները՝ ըստ չափորոշիչների, հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների աճուրդային մեկնարկային գները՝ ըստ չափորոշիչների, ինչպես նաև հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների էլեկտրոնային աճուրդի կանոնակարգը.»,

2) լրացնել նոր «գ.1)» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ.1) կազմակերպում և անցկացնում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդ.»:

~~**Հոդված 3.** Օրենքի 13.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության «մեծ պահանջարկ ունեցող», 4-րդ և 5-րդ նախադասությունների, ինչպես նաև 4-րդ մասի «Մեծ պահանջարկ ունեցող» բառերից հետո լրացնել «կամ առանձնահատուկ պահանջարկ ունեցող» բառերը.~~

Հոդված 3. Օրենքի 13.2-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Տրանսպորտային միջոցը փոխելիս (օտարելիս) հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողն այն ի պահ է հանձնում տրանսպորտային միջոցը հաշվառող մարմնին: Եթե վեց ամսվա ընթացքում տվյալ հաշվառման համարանիշներն օգտագործողը կամ նրա մերձավոր ազգականը (հայր, մայր, եղբայր, քույր, ամուսին, զավակ) հաշվառման է ներկայացնում սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ տրանսպորտային միջոց, ապա այդ հաշվառման համարանիշները տրամադրվում են օգտագործողին կամ մերձավոր ազգականին՝ հաշվառման համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ: Նշված ժամկետում այլ տրանսպորտային միջոց հաշվառման չներկայացնելու դեպքում նա զրկվում է ի պահ հանձնված հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործելու առաջնահերթության իրավունքից: Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողը կարող է ցանկացած պահի հրաժարվել այդ հաշվառման համարանիշի օգտագործման իրավունքից: Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել տրանսպորտային միջոցը ժառանգած անձին՝ հաշվառման համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ:

7. Հաշվառման առանձնահատուկ համարանիշների օգտագործման իրավունքը սույն հոդվածի 6-րդ մասում նշված մերձավոր ազգականին կարող է փոխանցել միայն տվյալ հաշվառման համարանիշն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձը, բացառությամբ ժառանգությամբ կամ տվյալ հաշվառման

համարանիշներն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձանց փոխանցելու դեպքերի:»:

Հոդված 4. Օրենքի 13.2-րդ հոդվածից հետո լրացնել նոր 13.3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 13.3. Տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդների անցկացման հիմնական պայմանները

1. Տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդը (այսուհետ՝ աճուրդ) էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ներքին գործերի լիազոր մարմնի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ներքին գործերի լիազոր մարմնի համապատասխան ծառայությունը:

2. Աճուրդի լոտ է հանդիսանում տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը:

3. Աճուրդի անցկացման գործընթացի նկատմամբ կիրառվում են «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով սահմանված՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին (աճուրդին) վերաբերող կարգավորումները, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով:

4. Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը կատարվում է աճուրդն անցկացնելու (սկսելու) օրվանից առնվազն երկու օր առաջ, որը ներառում է «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-8-րդ կետերով սահմանված տեղեկությունները:

5. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է ներքին գործերի լիազոր մարմնի http://www.mia.gov.am պաշտոնական ինտերնետային կայքում:

6. Աճուրդին մասնակցել ցանկացող անձը ինտերնետ կայքում ստեղծված համակարգում գրանցում է մասնակցի անձնական էջ, որից հետո հրապարակային ծանուցման մեջ նշված կարգով և ժամկետներում լոտի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով աճուրդի մասնակցության նախավճար է սառեցնում կամ փոխանցում կազմակերպչի դեպոզիտ

հաշվին և հայտագրվում աճուրդին: Աճուրդի հրապարակային ծանուցման և մասնակիցների գրանցման կարգը սահմանում է ներքին գործերի լիազոր մարմնի ղեկավարը:

7. Յուրաքանչյուր լոտի աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում տվյալ լոտի աճուրդն սկսելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Աճուրդի ավարտին նախորդող 10 րոպեների ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 10 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից:

8. Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Լոտի մեկնարկային գնի նվազագույն հավելումները կատարվում են «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափերով:

9. Աճուրդում հաղթած մասնակցի կողմից նախօրոք սառեցված նախավճարը փոխանցվում է կազմակերպչի հաշվին, իսկ դեպոզիտ հաշվին փոխանցված գումարը չի վերադարձվում:

10. Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարն ապասառեցվում է (վերադարձվում է):

11. Լոտի գնի վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով:

12. Կազմակերպիչն աճուրդի ավարտից հետո անմիջապես աճուրդում հաղթած մասնակցի անձնական էջում հասանելի է դարձնում կամ նրա կողմից նշված էլեկտրոնային փոստին է ուղարկում աճուրդի արձանագրությունը, որի ձևը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

13. Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել գնված լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը:

14. Աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնման գինը չմուծվելու դեպքում նախավճարը չի վերադարձվում:

15. Լոտի վաճառքի ամբողջական գինը կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի անձնական էջում հասանելի է դարձնում կամ նրա կողմից նշված էլեկտրոնային փոստին է ուղարկում հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման

իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին վկայականը, որի ձևը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

16. Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին վկայականը վավեր է մեկ տարի: Նշված ժամկետում այն տրանսպորտային միջոցի հաշվառում իրականացնող ստորաբաժանում չներկայացնելու (աճուրդով օգտագործման իրավունքով ձեռք բերված հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշներով տրանսպորտային միջոց չհաշվառելու) դեպքում աճուրդում հաղթող մասնակիցը կորցնում է հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը, իսկ լոտի վաճառքի գինը չի վերադարձվում:

17. Աճուրդը համարվում է չկայացած, եթե՝

1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ.

2) աճուրդի ընթացքում լոտի մեկնարկային գնի հավելում չի կատարվել.

3) աճուրդում հաղթած անձը հրաժարվել է առուվաճառքի պայմանագիր կնքելուց կամ սահմանված ժամկետում չի վճարել լոտի գնման գինը:

18. Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չմուծելու հիմքով, ապա տվյալ մասնակցի համար հաջորդ աճուրդի մասնակցության նախավճարը սահմանվում է լոտի մեկնարկային գնի քսան տոկոսի չափով:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով և 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի ~~**հրամանն**~~ ***հրամաններն*** ընդունվում են սույն ~~օրենքի~~ *օրենքն* ուժի մեջ մտնելուց *հետո* երեք ~~ամիս հետո~~ *ամսվա ընթացքում*:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-583-05· 05· 2023-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածից հանել «ինչպես նաև դրանց հատկացման աճուրդների անցկացման կարգը.» բառերը, քանի որ հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշները իրացվելու են էլեկտրոնային աճուրդի միջոցով, և անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել օրենքի 9 · 1-ին հոդվածի 1-ին մասի «գ» կետում:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածից հանվել է «ինչպես նաև դրանց հատկացման աճուրդների անցկացման կարգը.» բառերը, և համապատասխան լրացում է կատարվել 9· 1-ին հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է
2	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, քանի որ նախատեսվում են նոր	Ընդունվել է Նախագծի 2-րդ հոդվածը շարադրվել է նոր	Ընդունվել է

			իրավակարգավորումներ էլեկտրոնային աճուրդի անցկացման համար:	խմբագրությամբ· «**Հոդված 2.** Օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին մասում՝ 1) «գ.» կետը կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ. սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման գները՝ ըստ չափորոշիչների, հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների աճուրդային մեկնարկային գները՝ ըստ չափորոշիչների, ինչպես նաև հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների էլեկտրոնային աճուրդի կանոնակարգը», 2) լրացնել նոր «գ · 1)» կետ՝ հետևյալ բովանդակությամբ· «գ · 1) կազմակերպում և անցկացնում է տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ	

				պահանջարկ ունեցող համարանիշների հատ-կացման էլեկտրոնային աճուրդ,»:	
3	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 13· 2-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ և 7-րդ մասերով: Առաջարկությունը պայ-մանավորված է այն հանգամանքով, որ տրանսպորտային միջոցը փոխելիս (օտարելիս) հաշվառման առանձ-նահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողն իրավունք է ունենում այն ի պահ հանձ-նելու տրանսպորտային միջոցը հաշվառող մարմնին: Հաշվառման առանձ-նահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը մերձավոր ազգականին կարող է փոխանցել միայն տվյալ հաշվառման համարանիշն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձը, բացառությամբ	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 13.2-րդ հոդվածը լրացվել է նոր 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ· «6. Տրանսպորտային միջոցը փոխելիս (օտարելիս) հաշվառման առանձնահատուկ պահան-ջարկ ունեցող համարանիշն օգտագործողն այն ի պահ է հանձնում տրանսպորտային միջոցը հաշվառող մարմնին: Եթե վեց ամսվա ընթացքում տվյալ հաշվառման համարանիշներն օգտագործողը կամ նրա մեր-ձավոր ազգականը (հայր, մայր, եղբայր, քույր, ամուսին, զավակ) հաշվառման է ներկայացնում սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ տրանս-պորտային միջոց, ապա այդ հաշվառման համարանիշները	Ընդունվել է

			ժառանգությամբ կամ տվյալ հաշվառման համարանիշներն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձանց փոխանցելու դեպքերի:	տրամադրվում են օգտագործողին կամ մերձավոր ազգականին՝ հաշվառման համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ: Նշված ժամկետում այլ տրանսպորտային միջոց հաշվառման չներկայացնելու դեպքում նա զրկվում է ի պահ հանձնված հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործելու առաջնահերթության իրավունքից: Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշն օգտագործողը կարող է ցանկացած պահի հրաժարվել այդ հաշվառման համարանիշի օգտագործման իրավունքից: Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել տրանսպորտային միջոցը ժառանգած անձին՝ հաշվառման	

				համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ: 7. Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը սույն հոդվածի 6-րդ մասում նշված մերձավոր ազգականին կարող է փոխանցել միայն տվյալ հաշվառման համարանիշն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձը, բացառությամբ ժառանգությամբ կամ տվյալ հաշվառման համարանիշներն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցող անձանց փոխանցելու դեպքերի:»:	
4	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով	Առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 4-րդ հոդվածով, ըստ որի օրենքը լրացվում է նոր 13· 3-րդ հոդվածով, որով նախատեսվում են նոր իրավակարգավորումներ տրանսպորտային միջոցների հաշվառման	Ընդունվել է **Հոդված 4.** Օրենքի լրացնել նոր 13.3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 13.3. Տրանսպորտային միջոցների հաշվառման**	Ընդունվել է

			առաձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդների անցկացման հիմնական պայմանների վերաբերյալ:	**առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդների անցկացման հիմնական պայմանները** 1. Տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման էլեկտրոնային աճուրդը (այսուհետ՝ աճուրդ) էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ներքին գործերի լիազոր մարմնի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ներքին գործերի լիազոր մարմնի համապատասխան ծառայությունը: 2. Աճուրդի լոտ է հանդիսանում տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքը: 3. Աճուրդի անցկացման	

				գործընթացի նկատմամբ կիրառվում են «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով սահմանված՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին (աճուրդին) վերաբերող կարգավորումները, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով: 4. Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը կատարվում է աճուրդն անցկացնելու (սկսելու) օրվանից առնվազն երկու օր առաջ, որը ներառում է «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-8-րդ կետերով սահմանված տեղեկությունները: 5. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է ներքին գործերի լիազոր մարմնի *http://www.mia.gov.am* պաշտոնական ինտերնետային կայքում:	

				6. Աճուրդին մասնակցել ցանկացող անձը ինտերնետ կայքում ստեղծված համակարգում գրանցում է մասնակցի անձնական էջ, որից հետո հրապարակային ծանուցման մեջ նշված կարգով և ժամկետներում լոտի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով աճուրդի մասնակցության նախավճար է սառեցնում կամ փոխանցում կազմակերպչի դեպոզիտ հաշվին և հայտագրվում աճուրդին: Աճուրդի հրապարակային ծանուցման և մասնակիցների գրանցման կարգը սահմանում է ներքին գործերի լիազոր մարմնի ղեկավարը: 7. Յուրաքանչյուր լոտի աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում տվյալ լոտի աճուրդն սկսելու օրվան հաջորդող 3-րդ աշխատան-քային օրվա ժամը 12:00-ն: Աճուրդի ավարտին նախորդող 10 րոպեների ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս	

				10 որպե՝ հաշված առաջարկի ստացման պահից: 8. Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Լոտի մեկնարկային գնի նվազագույն հա-վելումները կատարվում են «Հրապարակային սակարկու-թյունների մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափերով: 9. Աճուրդում հաղթած մասնակցի կողմից նախօրոք սառեց-ված նախավճարը փոխանցվում է կազմակերպչի հաշվին, իսկ դեպոզիտ հաշվին փոխանցված գումարը չի վերադարձվում: 10. Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարն ապասառեցվում է (վերադարձվում է): 11. Լոտի գնի վճարումն	

				իրականացվում է անկանխիկ եղանակով: 12. Կազմակերպիչն աճուրդի ավարտից հետո անմիջապես աճուրդում հաղթած մասնակցի անձնական էջում հասանելի է դարձնում կամ նրա կողմից նշված էլեկտրոնային փոստին է ուղարկում աճուրդի արձանագրությունը, որի ձևը սահմանվում է աճուրդի կանոնակարգով: 13. Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել գնված լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը: 14. Աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնման գինը չմուծվելու դեպքում նախավճարը չի վերադարձվում: 15. Լոտի վաճառքի ամբողջական գինը կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, կազմա-կերպիչն աճուրդում հաղթած	

				մասնակցի անձնական էջում հասանելի է դարձնում կամ նրա կողմից նշված էլեկտրոնային փոստին է ուղարկում հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին վկայականը, որի ձևը սահմանվում է աճուրդի կանոնակարգով: 16. Հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման իրավունքն աճուրդով ձեռք բերելու մասին վկայականը վավեր է մեկ տարի: Նշված ժամկետում այն տրանսպորտային միջոցի հաշվառում իրականացնող ստորաբաժանում չներկայացնելու (աճուրդով օգտագործման իրավունքով ձեռք բերված հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշներով տրանսպորտային միջոց չհաշվառելու) դեպքում աճուրդում հաղթող	

				մասնակիցը կորցնում է հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող համա-րանիշների օգտագործման իրավունքը, իսկ լոտի վաճառքի գինը չի վերադարձվում: 17. Աճուրդը համարվում է չկայացած, եթե՝ 1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ. 2) աճուրդի ընթացքում լոտի մեկնարկային գնի հավելում չի կատարվել. 3) աճուրդում հաղթած անձը հրաժարվել է առու-վաճառքի պայմանագիր կնքելուց կամ սահմանված ժամկետում չի վճարել լոտի գնման գինը: 18. Եթե աճուրդը չի կա-յացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չմուծելու հիմքով, ապա տվյալ մասնակցի համար հաջորդ աճուրդի մասնակցության նախավճարը սահմանվում է լոտի մեկնարկային գնի քսան տոկոսի չափով:»:	

5	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածի համարակալել որպես 5-րդ հոդված և խմբագրել, մասնավորապես, «հրա-մանն» բառը փոխարինել «հրամաններն» բառով, քանի որ նշված իրավահարաբերությունները կարգավորվելու են ներքին գործերի լիազոր մարմնի հրամաններով:	Ընդունվել է Նախագծի 5-րդ հոդվածում «հրամանն» բառը փոխարինվել է «հրամաններն» բառով և կատարվել է խմբագրական բնույթի փոփոխություններ:	Ընդունվել է